



ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

14 մարտ, 2025 թվականի № 21-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի № 5-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի պարտականությունները կատարողի, գործադիր տնօրենի տեղակալ-ֆինանսական տնօրենի կողմից 2025 թվականի մարտի 12-ին ներկայացված թիվ N-ԱՀ-03/119/25 գրությունը և հաշվի առնելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ու 2025 թվականի մարտի 30-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքներին անվճար և վճարովի հիմունքներով եթերաժամանակի տրամադրման անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2025 թվականի փետրվարի 7-ի № 5-Լ որոշման № 1 հավելվածով հաստատված՝ Ընկերության «Առաջին ալիք» տեսալսողական ծրագրի՝ 2025 թվականի մարտի 15-ից մինչև հունիսի 30-ը ներառյալ ժամանակահատվածում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ այն շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

14 մարտ, 2025 թվականի

ք. Երևան